

արհեստանոցը, որտեղի աշխատաւորները վերջին չորս տարուան ընթացքում, պատերազմի յեղափական խժդութիւնների եւ արկածախնդրութեան ըրջանում, 1915—1921, փշացած շոգեշարժ քարշակներից մի քանի հատը, առանց վճարի, վերանորոգեցին եւ նուիրեցին նորակազմ Հ. Ս. Խ. Հասարակապետութեան եւ գեռ շարունակում են այդ անձնուէր գործը մեծ եռանդով։ Պէտք է տեսնել, թէ ինչպիսի փշացած, անպետքացած եւ ջարդուած քարշակներ են նորոգել եւ գործադրութեան դրել, որպէս զի մարդ կարողանայ որոշ գաղափար կազմել արհեստանոցի գործաւորների կատարած այս զոհաբերութեան մասին։ Սյն ժամանակ երբ հնարաւորութիւն չկար նորանոր մեքենան-քարշակներ ձեռք բերելու եւ բարեկարգելու երկաթուղու գնացքներն, այս ծառայութիւնը, անձնուրաց զոհաբերութիւնը անգնահատելի էր։

Արդէն շինուամ եւ կարգի են դրւում ջուլականոցի մեքենաները, որը Հայաստանին նուիրել եւ մեղ ուղարկել է Հ. Ս. Խ. Հասարակապետութիւնը 1923ին։

Երկաթուղու մեքենական արհեստանոցի, ջուլականոցի եւ ելեքտրական կայարանի համար “Հանդեսին”, կը գրեմ մի ուրիշ անգամ մանրամասնաբար։

Ջրանցքը ներքնուղուց դուրս գալուց յետոյ՝ 45 կիլոմետրի երկարութեամբ լնթանում է Շիրակի դաշտում կազմելով աղեղնաձեւ քաղաքիս շորջը, որը ոսոգելու է 16 հեկտար դաշտի հողերը։ Այս 45 կիլոմետր ջրանցքի 85% արդէն պատրաստ է, փորուած է, պէտք է հունը տեղ-ատեղ ցեմենտով եւ քարով բարեկարգել։ Մինչեւ Հոկտեմբերի սկիզբը ջրանցքի այս աշխատութիւնն էլ լիովին պատրաստ կը լինի։

Ջրանցքը Օրթա Քիլիսա գիւղի մոտ անցնելու է Նրա համար յատկապէս շինուելիք երկու կամուրջներից, ագուգաներից, որոնցից մինը 21 եւ միւսը 40 մետր երկարութիւն, երկուն էլ տասնական մետր բարձրութիւն ունին այն խրամատների յատակից որոնց վրայ կառացւում են կամուրջները։ Կամուրջները չորս մետր եւ կէս լայնութիւն ունին, որոնց վրայ տեղաւորելու է միայն ջրանցքը, անցորդ կամ սայլորդ կարող են ցածրից գնալ։ Կամուրջները շինուամ են, որպէս զի ջրանցքի ջրի բարձրութիւնը չի լինի, չննինի, իսկ պատնէշ չէր կարելի այդանդ շինել, քանի որ դաշնան հեղեղների ժամանակ

այդ խրամատներից ջրեր են հոսում, անցնում կամ մերջները կառուցւում են կարծր քարով։

Բաց ջրանցքի առուի ամրացուելիք եւ ցեմենտով շինելի մասը ամբողջ ջրուղու երկարութեան 200/00 է միայն կազմում, մնացեալը պինդ եւ հաստատուն կաւից ու փիսարից է անցնում։

Շիրակի ջրանցքի ամենադժւար եւ հսկայական մասը ներքնուղին էր կազմում, որ արդէն մեծ յաջողութեամբ եւ ուղեղ գծերով միացան իրար հետ, եօթը իրար հանդէպ գործող աեղերից, բաց ջրանցքի մասը մեծ նեղութիւն չի կարող պատճառել այն արիաջան աշխատողներին որոնք 21 ամսուան ընթացքում անարգել հերոսական քայլերով առաջ տարին իրենց ստանձնած գործը։ Ըստով խմբագրութեանդ միջոցով հասարակութեան կը յայտարարեմ ջուլականոցի եւ երկաթուղու մեքենական արհեստանոցների մասին։

Լևահական, 27 Օգոստոս, 1924։ Ս. ԱԺՐՈՅԵՑ



## ՆՈՐ ՍԱՑԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ԴԻՑԱԳՈՒԹԻՒՆՆԵՐ Լ. ՅՈՒՆԹԻ ՀԱՅՈՒԵՐ-ՆԵՐԻ ԴԻՑԱԳՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՎԵՍՏԻՆ ՊԱՑՈՒԿԻՆ, ՏԵՂԱԿԵՆ, ԿԵՆՑԵՂԱԿԻՆ ՏԵՍԱԿԵՑԻՑ

“Հ/Ն Աստուածներ, դրամայի մասին բաւական քննադատականներ լիս են տեսել ժամանակին. սակայն այդ տաղանդաւոր դրուածքի պարզաբանութիւնը չի կարելի աւարտուած համարել։

Հայ դրականութեան մեջ յատուկ ուշադրութեան արժանացած այդ դրուածքը արժէ ուսումնասիրել, որովհետեւ հայ կեանքի որոշ կողմից պարզաբանութեան գեղեցիկ կերտուածքն է։

Երկար ժամանակ Սեւանում, յատկապէս ամառներն, անցկացնելով՝ առիթ եմ ունեցել գրեթէ քայլ առ քայլ վերլուծել պատմական, կենցաղական եւ տեղագրական տեսակէտից այդ դրաման, մի կողմից պատմական յիշատակարանները ի նկատի ունենալով, միւս կողմից կզզու դիբը, տեղագրութիւնը եւ երրորդ կողմից հարց ու փորձ արել Սեւանի միաբաններին միարանական կենցաղի, ժամապաշտութեան մասին։

Այդ տեղեկութիւններն են ահա, որ ի մի  
հաւաքած հարկ եմ համարում հետաքրքրուուշ-  
ների ու շագրութեանն յանձնել ենթադրելով,  
որ որոշ խնդիրներ կը պարզուեն էլ աւելի, քան  
մինչեւ այժմ է:

Հեղինակն ինքը եղել է կղզում, որոշ չափով հետաքրքրութել է, սակայն ոչ ամեն մասնամասնութիւն իր գրամայում ուսումնասիրութեան հետեւանք է, այլ կանդէպքեր, նկարագիւներ, օրոնք գեղեցիկ զուգագիպութեամբ միայն համապատասխանում են իրականութեան, Հեղինակը պատմական անցեալի դէպքերի հետ միացրել է ժամանակակից տեղագրականը, որոշ դէպքերում եւ կինցաղականը եւ այս զուգորդութիւնն այնքան ընական է եղել, որ ընթերցողը դժուարութեամբ կարողանում է որշել պատմական անցեալի եւ ժամանակակից տեղականը, կինցաղականի տարրերը՝

Իմ գիտողութիւններն այդ զուգորդութիւնն  
են ապացուցանում եւ այն, թէ տաղանդաւոր  
դրոշը իր ներքին ըմբռնումավ ու զիզը, իրականը,  
սահմանադր ապրել կարող է:

Դիտողութիւնները գասաւորուած են համաձայն դրամայի գործողութիւնների գասաւորութեան:

տուն եւ հանճարեղն լրութեամբ, սիրողն ի  
Մարիամայ Սիւնեաց տիկնոջէ կանգնեալ զսա  
ուխտ, եւ ժողովեալ եղաքրս Վասակայ Սիւնեաց  
իշխանին, յորում ունկնդիր լեալ յետոյ հա-  
ւաստացաւ ասէ, եթէ յԱստուծոյ հրամանաւ ես  
ոչ ընդդիմացայց եւ շինեաց վանս եւ զարդա-  
րեաց վայելւական սպասիք. եւ մեկներ եւս ի  
մրգոյ եւ ի ջրոյ. եւ խրատէր զամենեսեան ի  
նոյն կարգ. եւ բազում ի սուտ եղաքր նենգաւ  
կեղծաւորութեան եւ պէսպէս խարդախոր թեան  
տանէր, քանզի զամենեսեան սատանայ վառէր  
ընդդէմ նորա, այլ նա առօքինութեամբ տա-  
նէր ամենայնի, վանս յուսոյն իւրոյ զօր ունէր առ  
քրիստոս։ Աշոտ Խշանը Վրաց կողմերում աւա-  
գակներին զսպելուց յետոյ գալիս է Աւեան եւ  
Մաշտոցին նուրիում է ։ զրյու մշտմշնաւոր ։  
Կենաց փայտի մի մասը), որն ստացել էր Յու-  
նաց Վասիլ Կայսրից եւ զօր պնդեալ էր ոսկով  
գարդարեալ գեղեցիկ ընդելու զեալ մար-  
եւ զարդարեալ գեղեցիկ ընդելու զեալ մար-

գարտող՝  
Այսպիսով վանահօր եւ իշխանութունը սկզ  
եղած գեպքը վերաբերում է Մաշտոց Վանա-  
կանին, յետոյ կաթողիկոս, եւ Մարիամ Իշխա-  
նուհուն. գեպքը տեղի է ունեցել թ. դարում.  
սոյց է, որ Աշոտ իշխանը եկել է Սեւան եւ  
Մաշտոցին, Վանքին նուելներ է տուել: Յիշա-  
տակարանի ակնարկը, թէ “սիրով” ի Մարիամայ  
Սիւնեաց տիկնոցէ, յամենայն գեպս ցցց է  
տալիս, որ որոշ ծանօթութիւն, կապ — գուցէ  
պարզ յարգանքի — եղել է Մաշտոցի եւ Սիւնեաց  
տիկնոց մէջ: Նցնեցս այն ակնարկը, որ չար եղ-  
բայրները նրան հալածել են, դրամայի ոյն մաքին  
համապատասխան է, որ վանահօր եւ միաբանու-  
թեան մէջ տարաձայնութիւն է ընկնում եւ  
միաբանները բաժանում են իրենց վանահօրից:  
Զ. Առաջին արարի Ա. տեսարանը: —

Սեւանի գագաթն է, ժայռը, ուր կայ կիսափոլ  
կամար եւս: — Այժմ էլ Սեւանի գագաթին կայ  
երկու խաչքար, որ բատ աւանդութեան Լուսա-  
ւորչի դրածներն են, խկապէս սակայն շատ ուշ  
ժամանակի խաչքարեր են: Կարեւորն այն է,  
որ Սեւանի գագաթի այդ խաչքարերը ինչ որ  
չենքի վիտատի վրայ են դրուած: Այդ տեղը  
զզու ամենաբարձր տեղն է, ուր տեղից առա-  
ջին անգամ արեւի ծագումն երեւամ է: Փլա-  
տակները ամենայն հաւանականութեամբ հե-  
թանոսական հին տաճարի աւերակների վրոյ են:  
Յոյժնի է, որ գեր Խալդերի ժամանակ Սեւանը  
գտնեւամ էր նրանց իշխանութեան տակ: «Սեւան,  
բատ Պրոֆ, նիկոլսկու նրանց լեզուով լիճ, աւա-

զան կը նշանակէ. Խալդերն ի հարկէ ունեցել են տաճար այդ տեղ. կղզին միաժամանակ լաւ ամրութիւն էր նրանց համար. Հեթանոս հայերն հոս ունեցել են տաճար, ինչպէս յայտնի է ըստ աւանդութեան Լուսաւորիչը հին կռատունը քանդել է տւել եւ նոր քրիստոնէական տաճար շինել: Այսպիսով պատմական իրողութիւն է որ Սեւանում հեթանոսական տաճար է եղել. որ այդ տաճարի փլատակներն այժմ էլ կան, հաւանօրէն Սեւանի գագաթն է այդ:

Ճերմակաւորը ենում է այդ փլատակների միջց. իսկ վանահայրը պէտք է նստած լինի այդ փլատակների եւ Առաքելոց վանքի միջեւ գտնուած ժայռերի, խաչքարերի մօտ. որով վանահօր առաջը կը լինի նոր շինուող տաճարը, իսկ ետեւը՝ հին փլատակ տաճարը. ծովն էլ առաջը. ինչպէս Ճերմակաւորը իր խօսքի մէջ յիշելով ցոյց է տալիս այդ:

3. Ճերմակաւորն ասում է: — «Տես այդ երկու երեք խարխուլ խցիկները...» (էջ 7): — Յիրաւի այժմ էլ կան իցիկներ. խարխուլ եւ մեծ մասամբ քանդուած վերսիշեալ տեսարանի մէջ երեւացող. Առաքելոց տաճարի կողմին եւ առաջը — «Հին Աստուածները, ներկայացնելիս պէտք է ներկայացման զեկավարը այցելէ Սեւանի կղզին, դիբը լաւ դիտէ եւ մոտաւու լինի, որով տպաւորութեանը ուժեղ կը լինի եւ պատկերը հարազատ:

4. Բ. տեսարան: Դրամայում ասուած է Ամբողջ տեսարանի միջոցին քամի է, երբեմն խիստ բուռն թափով (էջ 11) — Սեւանի այժմեան նաւազարներն էլ մանրամասն դիտեն ծովակի վրայ վչող քամիների ինչ լինելու: Քամիներ յաձախ են վչում, որոնցից ամենից վտանգաւորը այսպէս կոչուած «Սոթի» քամին է. Այդ քամին վիզում է հին Սոթք գաւառից, կղզու հարային կողմէ եւ ամենից վտանգ աւոր քամին է. ալիքները շատ մեծ են, թափով. այնպէս որ ինչպէս նաւազարներն էլ միշտ ասում են, երբ «Սոթ է կանգնում», գուրս գալ կղզուց կամ կղզի մտնել դժուար է, նաւըսովորաբար չի դում քանի որ փաքր նաւակ է. 4—5 նաւաստիներ են զեկավարում. կղզու ափերը ժայռուս են, նաւը ափին մօտենալ չի կարողանում: Յայտնի է, որ 70 ական թուերին ժ.թ. րդ դարու նոր բայազիտի կողմից եկող մի նաւ Սոթի քամուն ենթարկուելով խորտակւել է եւ շատերը խեղդուել են (տես Սարգիս Փիլյանի — յետոյ Սեւանի վանահայր Սարգիս եպ. — «Կորած Մարգարիտ, վեպիկը»):

5. Դրամայում յիշւում է, որ վանքում գործադրում էր լաստ, որը համապատասխանում է իրողութիւններն: Մինչեւ ժ.թ. րդ դարու երրորդ քառորդը գործադրուել է լաստը, որը բաղկացած է եղել 7 հաստ գերաններից. Վերջն լաստի գերանները ցայսօր կան: Առաքելոցի գաւթի սիւներն են: Լաստն էլ վարում էին միաբանները, ինչպէս վկայում է ականատես Մ. Պ. Կիւմիւշանցին իր Սեւանայ պատմութեան մէջ:

Էջմիածին:

(Շարունակելու)

Pessimist.



## ՍԱՑԵՆԱԽՈՍԱԿԱՆ

ՀԱՄԱՍՑԵՂ՝ ԳԻՒՂԵՐ, ՊՈՍԹԸՆ, 1924, էջ 155, զի՞նը 1 տոլար:

Այս հեղինակը եւ նրա դիբը մի միսիթարական գիւտ է մեր գեղարուեստական գրականութեան համար: Այսպէս ենք ասում ոչ միայն հեղինակի ձիբը եւ նրա պատկերացման նրաթը նկատի առնելով, այսպէս ենք ասում վերյիշելով. եւ այն, որ մեր քաղաքական ճակատագիրը առանձնայատուկ հոգեր բարդելով հայ զրոյշ ների աւագ սերունդի աւած՝ նրանց զրկեց գեղարուեստական զգացումի, ապրում եւ վերարտադրումի անխառն ստեղծագործութիւնից: Մաշեցաւ մեր հասարակական կեանքի կարեւորագոյն փուլը, երբ մենք նահապետականութիւնից ու ասիականութիւնից թեւակոյնեցինք արդի եւ բոպական քաղաքակրթութեան ուղին, եւ այդ փոխանցման ըրջանը իր բոլոր տուայտանքներով, իր նոր հոգսերով եւ նոր ձգտումներով չպատկերացուեց մեր գեղարուեստական գրականութեան մէջ: Ի՞նչ ենք հասկանում նահապետականութիւն եւ ասիականութիւնը բառերի տակ եւ ինչ եւրոպական քաղաքակրթութիւն յորջործումով: Այն, որ մեր ժողովրդի ճնշող մեծամասնութիւնը ապրում էր կառչած հողին ու ջրին, ինքնամիութի անտեսութեան պայմաններում, երբ նրա գերագոյն իշխանութիւնը բնոււթիւնն էր հանդիսանում իր անողոք օրէնքներով: Այն, որ մեր հայրենիքը ժ.թ. դարի երկրորդ կէսից սկսած դառնում է մի վայր, ուր սկսում է իր